

**ՀՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ  
ՊԱՏԻԺ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

**ԵՐԵՎԱՆ, 2020**



Federal Foreign Office

*Supported by the Federal Foreign Office*

Ստորև ներկայացվում է «ՀՀ ազատագրկման վայրերում պատիժ կրող անձանց կրթության առկա իրավիճակը» հետազոտությունը՝ ներառյալ առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ համապատասխան առաջարկությունները:

Հետազոտությունն իրականացվել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից Գերմանիայի Դաշնության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ իրականացվող «Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում:

### **Հետազոտական խմբի ղեկավար՝**

Գայանե Հովակիմյան

### **Աշխատանքային խումբ՝**

Արշակ Գասպարյան

Դավիթ Թումասյան

Մարինա Գալստյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ներածություն.....</b>	<b>4</b>
<b>Գլուխ 1. Կրթության իրավունքը քրեակատարողական հիմնարկներում.....</b>	<b>5</b>
1.1 Դատապարտյալների կրթության կազմակերպման իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում.....	5
1.2 Քրեակատարողական հիմնարկների տեսակներն ու դատապարտյալների պահման պայմանները՝ ազատազրկվածների կրթության կազմակերպման համատեքստում.....	10
1.2.1 ՔԿՀ-ներն արդարադատության համակարգում. ուղղիչ հիմնարկի տեսակներ	
1.2.2 Կրթություն և օրվա կարգացուցակ	
1.2.3 ՔԿՀ-ներում կրթական գործընթացի կազմակերպման պահանջներ և պայմաններ(ենթակառուցվածք)	
1.2.4 Կրթության կազմակերպումը՝ ըստ ազատազրկված անձի իրավական կարգավիճակի.	
1.3 Կրթությունը՝ դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատման գործոն.....	14
<b>Գլուխ 2. Կրթական ծրագրերի փորձը քրեակատարողական հիմնարկներում.....</b>	<b>19</b>
2.1 Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների վերաբերյալ վիճակագրությունը՝ կրթության համատեքստում.....	19
2.2 Առկա կրթական ծրագրեր.....	25
2.3 Գնահատում և մշտադիտարկում.....	28
<b>Գլուխ 3. Դատապարտյալների կրթության իրավունքի նկատմամբ հանրային ընկալումներ եվ դիրքորոշումներ.....</b>	<b>31</b>
<b>Առաջարկություններ.....</b>	<b>36</b>
<b>Հավելվածներ</b>	

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ազատագրված վայրերում պատիժ կրող անձանց կրթության առկա իրավիճակը» հետազոտությունն իրականացվել է ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից Գերմանիայի Դաշնության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ իրականացվող «Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունը ներառում է՝

- ԶԿՀ-ներում կրթությունը կարգավորող քաղաքականության ուսումնասիրություն (միջազգային և տեղական), որն իրականացվել է երկրորդային աղբյուրների վերլուծության հիման վրա:
- Դատապարտյալ անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալներ, այդ թվում կրթության մակարդակ և դրա հարաբերակցությունն այլ գործոնների հետ: Տվյալները տրամադրվել են ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հետազոտության շրջանակում մշակված ձևանմուշների հիման վրա 30.09.2019 դրությամբ:
- ՀՀ ԶԿՀ-ներում իրականացվող կրթական ծրագրերի ամփոփ նկարագիր: Տեղեկատվությունը ստացվել է նախկինում և ներկայումս իրականացված ծրագրերի փորձագիտական հետազոտության արդյունքների հիման վրա:
- Դատապարտյալների կրթության իրավունքի նկատմամբ հանրային ընկալումների և դիրքորոշումների հարցում խմբային քննարկումներ և առցանց հարցման միջոցով: Հարցման նպատակն է բացահայտել հասարակական ընկալումները և վստահությունը դատապարտյալների, նախկին ազատագրված անձանց կրթության իրավունքի նկատմամբ: Վերջինիս շրջանակում իրականացվել է 4 խմբային քննարկում, որոնց մասնակիցների ընտրությունն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի մեթոդով: Խմբային քննարկումների մասնակցել են ընդհանուր թվով 35 մասնակից, առցանց հարցմանը՝ 315 անձ: Սույն հարցումը չի հավակնում լինել ներկայացուցչական ՀՀ ողջ բնակչության համար, այնուամենայնիվ, այն առաջին նման պրակտիկ դաշտային աշխատանքն է և որպես այդպիսին նպատակ ունի սահմանել հիմնական դիրքորոշումների շրջանակը՝ առանց պատճառահետևանքային հիմքերի ուսումնասիրության:

## ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

### 1.1. ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում դատապարտյալների կրթության իրավունքի հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել մարդու իրավունքների միջազգային ուղենիշների սահմաններում, ինչպես նաև ներպետական օրենսդրության, մասնավորապես՝ կրթության և քրեակատարողական ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի շրջանակներում:

Միջազգային հետևյալ փաստաթղթերը՝ հռչակագրերը, կոնվենցիաները, կանոնները, բանաձևերը և առաջարկությունները սահմանում են մարդու իրավունքների համընդհանուր շրջանակը՝ այդպիսով կարգավորելով նաև ՔԿԳ-ներում կրթության իրավունքը: Դրանք կրում են խորհրդատվական բնույթ և ուղենշային, քաղաքական, սոցիալական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական համակարգի՝ միջազգային չափորոշիչների համապատասխանեցման համար: Այդ փաստաթղթերից ելակետային են՝

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.),
2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (1966թ.),
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (1966թ.),
4. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (1979թ.),
5. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (1989թ.),
6. Հաշմանդամների իրավունքների հռչակագիրը (1975թ.),
7. Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (1950թ.),
8. Խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բոլոր անձանց պաշտպանության հռչակագիրը (1975թ.),
9. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիան (1984թ.),
10. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավաբանական օգնության և իրավական հարաբերությունների մասին Քիշնևի կոնվենցիան (2002թ.) և այլ փաստաթղթեր:

Վերը նշված բոլոր միջազգային փաստաթղթերը կիրառելի են ՀՀ-ի համար, և ըստ էության ՀՀ օրենսդրության մաս են կազմում:

Վերոնշյալ փաստաթղթերի հիման վրա նաև մշակվել են ուղենշային, ոլորտային միջազգային հետևյալ փաստաթղթերը.

- Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշները (1955թ. վերանայված 1976թ.-ին, 2015թ.-ին), ՄԱԿ «Նեյսոն Մանդելայի Կանոններ»,
- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2006)2 հանձնարարականով հաստատված «Եվրոպական բանտային կանոնները», (1987թ., վերանայված 2006թ.-ին),
- Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրքը (1979թ.),
- Առողջապահության ոլորտի աշխատակիցների, մասնավորապես բժիշկների՝ բանտարկյալներին ու կալանավորվածներին խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանող բժշկական էթիկայի սկզբունքները (1982թ.),

- Բանտարկյալ կանանց հետ վարվեցողության և այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկի կանոնները) (2010թ.),

- Անչափահասների նկատմամբ արդարադատությունն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոնները) (1985թ.),

- Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն (1988թ.),

- Ետ Նախարարների կոմիտեի կողմից 1989թ.-ի հոկտեմբերի 13-ին ընդունված՝ Բանտերում կրթության վերաբերյալ թիվ R(89) 12 առաջարկությունը<sup>1</sup> և այլն:

Եվրոպական բանտային կանոնների 28.1-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ<sup>2</sup> պետք է ջանքեր գործադրի՝ ապահովելու ազատագրված անձանց կրթական ծրագրերով, որոնք բավականաչափ համապարփակ են և համապատասխանում են նրանց անհատական կարիքներին ու ձգտումներին: Նույն կանոնների 28.2-րդ կետը կարևորում է, որ առաջնայնությունը պետք է տալ այն ազատագրված անձանց, ովքեր չեն կարող **գրել, կարդալ, հաշվել**, ինչպես նաև նրանց, ովքեր **չունեն հիմնական կամ մասնագիտական կրթություն**, իսկ 28.3-րդ կետի համաձայն՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել անչափահաս և հատուկ կարիքներ ունեցող ազատագրված անձանց:

*Ազատագրված անձանց կրթությունը պետք է հնարավորինս՝*

ա) ինտեգրված լինի կրթական և մասնագիտական ուսուցման ազգային համակարգում, որպեսզի ազատվելուց հետո նրանք առանց խոչընդոտների հնարավորություն ունենան շարունակելու մասնագիտական ուսուցումը կամ կրթությունը,

բ) իրականացվի կրթական հաստատությունների հովանու ներքո:

Դատապարտյալների կրթական ծրագրերը հետապնդում են հետևյալ նպատակները՝

- մեծացնել հասարակության մեջ ազատագրվածների վերընդգրկվելու հնարավորությունները,

- թույլ չտալ նրանց հոգեպես ընկճվել,

- բարելավել դատապարտյալների վարքագիծը:

**Եթե անդրադառնանք ներպետական օրենսդրությանը**, ապա ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է անձի կրթության իրավունքը և այն հիմնարար իրավունք է: Կրթության ոլորտում հիմնարար օրենքն է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որն ուղղակիորեն չի անդրադառնում ԶԿՀ-ներում կրթության կազմակերպման հարցերին և այդ կանոնակարգող դրույթները սահմանված են ոլորտային օրենսդրությամբ:

ԶԿՀ-ներում **ֆորմալ կրթությունը** կարգավորվում է մի շարք ոլորտային օրենսդրական ակտերով և կանոնակարգերով, մասնավորապես՝

➤ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու, ստեղծագործ աշխատանքով զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրացման համար կիրառելի են կրթության ոլորտին վերաբերող իրավակարգավորումները, եթե այլ բան նախատեսված չէ քրեակատարողական օրենսդրությամբ:

➤ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը և մասնագիտական

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս՝ [http://www.epea.org/wp-content/uploads/Education\\_In\\_Prison\\_02.pdf](http://www.epea.org/wp-content/uploads/Education_In_Prison_02.pdf):

<sup>2</sup> Այսուհետ՝ ԶԿՀ:

ուսուցումը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

- ՀՀ կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի N1543-Ն որոշմամբ հաստատված ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ *կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի*<sup>3</sup> 112-րդ կետի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում կազմակերպելու համար դատապարտյալների հանրակրթությունը, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին կրթությունը՝ պետության հաշվին, իսկ բարձրագույն և հետբուհական կրթությունն ինչպես իրենց հաշվին, այնպես էլ՝ համագործակցելով այլ կազմակերպությունների հետ:
- Կանոնակարգի 113-րդ կետի համաձայն՝ դատապարտյալների մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է դրսեկության և հեռավար ձևերով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով: Դրսեկության ձևով կարող են իրականացվել նաև դատապարտյալի հանրակրթությունը և նախնական մասնագիտական կրթությունը՝ բացառությամբ անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների:

Էքստեն (այսուհետ՝ դրսեկություն)՝ ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող կրթության ձև:

Հեռավար (դիստանցիոն) ուսուցում՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

Կանոնակարգի 70-րդ կետի համաձայն՝ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների կրթությունը կարող է կազմակերպվել ստացիոնար ձևով, որը չպետք է խոչընդոտի պատիժը կրելու կարգը և պայմանները: Ուղղիչ այլ հիմնարկներում ստացիոնար կրթություն չի իրականացվում:

Ազատագրվածների մասնագիտական ուսուցմանն անդրադառնում է նաև 2005թ.-ի հուլիսի 8-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը՝ նախատեսելով դրույթ առ այն, որ «...Արհեստագործական կրթությունը և ուսուցումն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, բոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, ՔԿՀ-ներում, համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ...»:

Միևնույն ժամանակ շատ կարևոր է նաև անդրադարձ կատարել կրթական միջավայրի մաս կազմող և ոչ **Ֆորմալ կրթության հնարավորության ստեղծող իրավակարգավորումներին**, որոնցից առաջնային նշանակություն ունի ինքնագործ միավորումների և գրադարանների հարցը:

Ոչ ֆորմալ կրթության իրականացման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 91-րդ հոդվածը, որի համաձայն՝ դատապարտյալները կարող

<sup>3</sup> Այսուհետ՝ Կանոնակարգ:

են ստեղծել մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումներ, որոնք գործում են ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ: Այդ միավորումները կարող են համագործակցել համապատասխան միությունների և կազմակերպությունների հետ:

Դատապարտյալների ինքնագործ միավորումների հիմնական խնդիրներն են՝

1. զարգացնել դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները,
2. դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի ուղղման գործում,
3. մասնակցել դատապարտյալի աշխատանքը, կենցաղը և հանգիստը կազմակերպելուն,
4. սոցիալական օգնություն ցուցաբերել դատապարտյալին և նրա ընտանիքին,
5. պատիժը կատարելու նպատակներին, կարգին և պայմաններին չհակասող այլ խնդիրներ:

Ներքին կանոնակարգը սահմանում է, որ դատապարտյալին պահելու վայրերում կազմակերպվում են նաև *գրադարաններ*: Ի տարբերություն բաց և կիսաբաց ուղղիչ հիմնարկների՝ փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում գրադարանից օգտվելու գործընթացը սկսվում և հիմնվում է դատապարտյալի՝ ՔԿՀ-ի գրադարանավարին համապատասխան պատվեր ներկայացնելով: Կիսաբաց կամ բաց ուղղիչ հիմնարկում գրադարանին կից կազմակերպվում է ընթերցասրահ, որից դատապարտյալներն օգտվում են օրվա կարգացուցակով իրենց հատկացված ազատ ժամերին: Ներքին կանոնակարգը սահմանում է նաև, որ շինություններում, ելնելով դատապարտյալներին պահելու՝ օրենքով նախատեսված պայմանների առանձնահատկություններից, ի թիվս այլ կառույցների (ճաշարանը, կրպակը կամ խանութը, բուժկետը, տեսակցության սենյակները և այլն)՝ պարտադիր տեղակայվում են նաև դպրոցը, գրադարանը, զբաղվածության, մշակութային միջոցառումների անցկացման սենյակները և այլն: Ու թեպետ, վերջին տասը տարիների ընթացքում որոշ հիմնարկներ վերանորոգվել ու բարեկարգվել են, կառուցվել է նոր ՔԿՀ («Արմավիր» ՔԿՀ):

Պետք է նշել, որ ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգի և համապատասխան օրենսդրության բացակայությունը խնդրահարույց է, և, ելնելով դրանից, կարգավորումներ չկան ոչ ֆորմալ կրթության այնպիսի ծրագրերի համար, որոնք կարճաժամկետ դասընթացներն են:

#### ➤ **Կրթության հասանելիության հիմնախնդիրը ՀՀ կառավարության ծրագրում**

Հայաստանում 2018թ.-ին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների արդյունքում ձևավորված նոր իշխանությունը ևս, անձի կրթության իրավունքի ապահովումը հատուկ կարևորվել է նաև ՀՀ նորընտիր կառավարության ծրագրով<sup>4</sup>: Այսպես, «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» գլխում կառավարության ծրագիրն արժանապատիվ ու երջանիկ լինելու կարևոր բաղադրիչ է համարում կրթությունը՝ հատուկ ընդգծելով վերջինիս մատչելիությունն ու հասանելիությունը բոլոր քաղաքացիների համար. սոցիալական վիճակն ու Հայաստանի աշխարհագրությունը չպետք է խոչընդոտի կրթության իրավունքի իրացմանը:

Միևնույն ժամանակ կարևոր են նաև ՀՀ կառավարության ծրագրի արդարադատության բաժնում սահմանված նպատակները և դրանց իրականացման համար անհրաժեշտ նոր իրավական հիմքերը:

Ուսումնասիրության ժամանակահատվածում արդեն իսկ շրջանառության մեջ է եղել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագիծը (ներկայացվել է հանրային քննարկման 13.11.2019թ.-ին<sup>5</sup>), որի 121-րդ հոդվածը, բացի վերը նշված կարգավորումներից լրացուցիչ ամրագրում է, որ.

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի հավանություն տալու մասին, առ 07 հունիսի 2018թ. (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123022>)

<sup>5</sup> <https://www.e-draft.am/projects/2093/about>



- «ՔԿՅ-ներում կազմակերպվում է 30 տարին չլրացած դատապարտյալների հիմնական կրթություն: Անչափահաս դատապարտյալի համար հիմնական կրթությունը պարտադիր է: Ուսումը շարունակելու, կրթություն ստանալու ցանկություն ունեցող դատապարտյալի համար ՔԿՅ-ի վարչակազմը և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ:
- Երեսունից բարձր տարիքի դատապարտյալ, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, հիմնական կրթություն են ստանում իրենց ցանկությամբ:
- Պատժի կրման ընթացքում դատապարտյալի կրթությունը խրախուսվում է և հաշվի է առնվում նրա վերասոցիալականացումը գնահատելիս:
- Դատապարտյալի հիմնական կրթության կազմակերպումը, քրեակատարողական համակարգի կրթական հիմնարկների ստեղծումը, վերակազմավորումն ու լուծարումն իրականացվում է ՀՀ Արդարադատության նախարարության սահմանած կարգով՝ համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:»:

**Այսպիսով, եթե ամփոփենք** դատապարտյալների կրթության կազմակերպման իրավական ակտերի հիմնական շրջանակը (այդ թվում՝ նախատեսվող օրենսդրական բարեփոխումները), ապա կարելի է եզրակացնել, որ

- միջազգային կանոնակարգող փաստաթղթերի շրջանակում ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և դրանից բխող այլ իրավական ակտերը սահմանում են դատապարտյալների կրթության իրավունքը որպես հիմնարար իրավունք, նկարագրում են նաև դրա իրականացման ընդհանուր կարգը,
- ֆորմալ կրթության իրավական կարգավորումների շրջանակը հիմնականում համահունչ է միջազգային չափորոշիչներին և իրավական առումով չի սահմանափակում անձի կրթության իրավունքը: Գործնական իրացման հարցերն անշուշտ առանձնացված են և այստեղ է անհրաժեշտ հասկանալ, թե ինչքանով են նախատեսված նորմերը կյանքի կոչվում և ինչ է անհրաժեշտ դրանց կիրառման համար (այս հարցին անդրադարձ է կատարվում հաջորդիվ),
- Օրենսդրությունը նաև հնարավորություն է տալիս ՔԿՅ-ներում ոչ ֆորմալ կրթության իրականացում՝ ինքնագործ միավորումների, դասընթացների միջոցով,
- Մինևույն ժամանակ պետք է նշել, որ գործող օրենսդրության շրջանակում կրթության կազմակերպման գործառույթները հիմնականում դրված են ՔԿՅ-ների վարչակազմերի վրա, այնինչ նման լիազորության իրականացումը պահանջում է կամ առանձնացված մարմնի կամ վարչական մարմնի/լիազոր մարմնի դերակատարություն,
- Հայաստանի Հանրապետությունում գործող ներառական կրթության հայեցակարգը և միտումները ներկայում առավել բարենպաստ են կրթությունը բոլոր հաստատություններում հասանելի դարձնելու համար: Այնուամենայնիվ, դեռևս կան իրավակարգավորման խնդիրներ, չափորոշիչների համադրման անհրաժեշտություն, որի պարագայում միայն կրթության բոլոր ձևերը կարող են իրապես հասանելի լինել ՔԿՅ-ներում:

## 1.2 ԲՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ՝ ԱՉԱՏԱԶՐԿՎԱԾՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ


### 1.2.1. ՔԿՀ-ՆԵՐՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ԽԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՈւՂՈՂԻՅ ԻՒՄՆԱՐԿԻ ՄԵՏԱԿՆԵՐ

1999թ.-ից Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպայի Խորհրդին անդամակցելու և միջազգային պարտավորությունների ստանձնման արդյունքում, ՀՀ կառավարության 2001թ.-ի հոկտեմբերի 19-ի թիվ 1015-Ն որոշմամբ, քրեական պատիժների իրականացման ստորաբաժանումը դուրս բերվեց ՀՀ ներքին գործերի նախարարությունից և վերակազմավորվեց որպես ՀՀ արդարադատության նախարարության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում՝ քրեակատարողական ծառայություն, որը ներկայումս ներառում է կենտրոնական մարմինը (քրեակատարողական վարչությունը) և 12 ՔԿՀ-ները (ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը):<sup>6</sup>

12 ՔԿՀ-ներում ընդհանուր լրակազմը սահմանված է մինչև 5346 ազատագրված անձանց համար: Հիմք ընդունելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Քրեակատարողական ծառայության մասին» և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքների պահանջները՝ ՀՀ արդարադատության նախարարի 2012թ.-ի. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանով հաստատվել են ՔԿՀ-ների լրակազմերն ըստ նախանշված տեսակների՝ յուրաքանչյուր ազատագրվածի համար նախատեսելով 4բմ տարածք:

Ստորև գծապատկերում ներկայացվում է բոլոր ՔԿՀ-ների լրակազմերն՝ ըստ վերը նշված իրավական ակտի.

Գծապատկեր 1



ՔԿՀ-ներն իրենց հերթին բաղկացած են ուղղիչ հիմնարկներից, որոնք լինում են 5 տեսակի՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ և բուժական: Ըստ էության, այս աստիճանակարգումն ուղղված է նաև անձի աստիճանական ուղղման և հասարակության վերադարձի տեսլականին:

Ուղղիչ հիմնարկների տեսակների, առանձնահատկությունների քննարկումը կարելի է այն տեսանկյունից, որ կրթական գործընթացի կազմակերպումը տարբեր է դրանցից յուրաքանչյուրում՝ պայմանավորված տարածքային, ազատ տեղաշարժման, առանց հսկողության ելքի ու մուտքի իրավունքի տարբերակված պայմաններով, որոնք առկա են ուղղիչ հիմնարկներում:

<sup>6</sup> Քանի որ սույն զեկույցի նպատակներից է ներկայացնել ազատությունից գրկված դատապարտյալների կրթական իրավունքը, պրոբացիայի պետական ծառայությանը և այդ ծառայության կողմից իրականացվող պատիժներին անդրադարձ չի կատարվում:

**Փակ ուղղիչ հիմնարկում** դատապարտյալը պահվում է մինչև չորս մարդու համար նախատեսված մեկուսացված խցում, իսկ որոշ դեպքերում, հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ դատապարտյալը կարող է խցում պահվել նաև միայնակ:

**Կիսափակ ուղղիչ հիմնարկում** դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված մեկուսացված խցում և կարող է տեղաշարժվել առնվազն երեք ժամ տևողությամբ ցերեկային որոշակի ժամերին՝ ուղղիչ հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

**Կիսաբաց ուղղիչ հիմնարկում** դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում և կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

**Բաց ուղղիչ հիմնարկում** դատապարտյալը պահվում է մինչև տասը մարդու համար նախատեսված բնակելի կացարանում: Դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում, և ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս:

**Բուժական ուղղիչ հիմնարկում** դատապարտյալը պահվում է կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում, բացառությամբ բուժական ուղղիչ հիմնարկի համար նախատեսված առանձնահատկությունների: Բուժական ուղղիչ հիմնարկում կարող է ստեղծվել առանձնացված ստորաբաժանում կամ կացարան կամ խուց՝ դատապարտյալներին տարբեր մեկուսացվածության աստիճաններով պահելու նպատակով:

**Այսպիսով**, եթե դիտարկենք ուղղիչ հիմնարկների տեսակով պայմանավորված կրթության կազմակերպման հիմնահիմունքները, կարող ենք նշել, որ կրթության կազմակերպման համար շատ կարևոր է հիմնարկի տեսակը, քանի որ, պայմանավորված առանձնահատկություններով, լրացուցիչ սահմանափակումներ կամ պահանջներ կարող են լինել կրթության կազմակերպման տեսանկյունից: Մասնավորապես, հիմնական խնդիրն անվտանգության ապահովման և կրթության կազմակերպման համատեղումն է: Ավանդականորեն, ԶԿՂ-ները չեն ընկալվում որպես կրթական միջավայրեր, հատկապես փակ, կիսափակ և բուժական հիմնարկները: Այս մոտեցումը ձևավորել է այնպիսի գործելակերպ, որ կրթության կազմակերպումը պահանջում է բավականին ռեսուրսներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ, նման տեսակի հիմնարկներում կրթության իրականացնելու համար:

### 1.2.2. Կրթություն եվ օրվա կարգացուցակ

Կրթության կազմակերպման տեսանկյունից կարևոր է նաև ուղղիչ հիմնարկի օրվա կարգացուցակի ուսումնասիրությունը:

<b>ՕՐՎԱ ԿԱՐԳԱՑՈՒՑԱԿ</b>	
<b>ԿԱԼԱՆԱԿՈՐԿԱԾՆԵՐԻՆ ՊԱՅԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԵՎ ՈՒՂԴԻՉ ՀԻՄՆԱՐԿԻ</b>	
<b>(օրինակելի տարբերակ)</b>	
1.	Վերկաց` ոչ ուշ առավոտյան ժամը` 7.00-8.00
2.	Մարմնամարզություն` տևողությունը` 15 րոպե
3.	Հարդարում` տևողությունը` 10 րոպե
4.	Առավոտյան ստուգում, առավոտյան և երեկոյան հաշվառում` տևողությունը` մեկ ժամ
5.	Նախաճաշ` տևողությունը` մեկ ժամ
6.	Աշխատանքի բաշխում` առկայության դեպքում` տևողությունը` 40 րոպե
7.	Աշխատանքային ժամ` տևողությունը` համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի
8.	Ճաշ` տևողությունը` մեկ ժամ
9.	Երեկոյան հարդարանք` տևողությունը` 25 րոպե
10.	Ընթրիք` տևողությունը` մեկ ժամ
11.	Հանգստի ժամ` տևողությունը` մեկ ժամ
12.	Քնելու նախապատրաստություն` տևողությունը` 10 րոպե
13.	Քուն անընդմեջ` տևողությունը` 8 ժամ
14.	Ուսուցման ծրագրեր` իրականացվում են առանձին ժամանակացույցով

Այս օրակարգից ակնհայտ հետևում է, որ ուսումնական ծրագրերին տրվում է հատուկ ուշադրություն և օրենսդրորեն որևէ խոչընդոտ այդ ծրագրերն իրականացնելու համար չկա: Այդուհանդերձ, դժվար է պատկերացնել աշխատանքի և 8 ժամյա անընդմեջ քնի պարագայում ինչպես է կարգավորվելու տվյալ ազատագրված անձի օրվա կարգացուցակը` ըստ հաստատված անհատական ժամանակացույցի (ուսուցման ծրագրերին հասցնելու իմաստով): Հետևապես, աշխատող դատապարտյալների պարագայում դժվար է առանձնացնել կրթության համար առանձնացված ժամանակահատվածը: Որոշ պետություններում այս խնդիրը լուծվել է առանձնացված ժամանակացույցով, երբ տվյալ կրթական ծրագիրը ևս ներառվում է զբաղվածության մեջ և անձին տրվում է որոշակի ֆինանսական փոխհատուցում: Կան նաև պետություններ, որոնք առանձնացնում են կրթական և աշխատանքային գործունեությունը` այսպիսով հնարավորություն ընձեռելով անձին ներառվելու երկու գործընթացի մեջ:

### 1.2.3. ՔԿՅ-ներում կրթական գործընթացի կազմակերպման պահանջներ եվ պայմաններ (ենթակառուցվածք)

Կրթություն կազմակերպելու համար (այդ թվում՝ ՔԿՅ-ներում) ոլորտային օրենսդրությունը<sup>7</sup> և ՀՀ կառավարության կողմից նախատեսված կարգավորումները (մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2009թ.-ի հուլիսի 9-ի N 808-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ.-ի հուլիսի 7-ի N372-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» կրթության որևէ տեսակի կազմակերպման համար լիցենզավորման պայմաններ ու պահանջներ), ենթադրում են մի շարք պահանջներ ու պայմաններ (այդ թվում՝ համապատասխան տարածք, լաբորատոր պայմաններ, ուսուցչական կազմ, դասասենյակներ՝ համապատասխան կահավորմամբ և այլն), որոնք անհրաժեշտ են կրթության տվյալ տեսակը կազմակերպելու համար: Ֆորմալ կրթության կազմակերպման դեպքում չափորոշիչները սահմանված են ՀՀ կրթության ոլորտի օրենսդրությամբ: Զրեակատարողական օրենսդրության պարագայում չափորոշիչները ներքին կանոնակարգով սահմանված անվտանգության պայմաններն են, որոնք պետք է երաշխավորվեն բոլոր տեսակի միջոցառումների կազմակերպման համատեքստում:

Այսպիսով, կրթության կազմակերպումը ՔԿՅ-ում երկու ոլորտների և միջավայրերի միավորում է, որոնց համադրումը պահանջում է մարդկային, կազմակերպական, տեխնիկական, շենքային ռեսուրսների համադրում:

Կրթական չափորոշիչները որպես տվյալ տեսակի կրթության պայմաններ ընդհանրական են, և սահմանված են կրթության որոշակի որակի և ազդեցության ապահովման համար: Պետք է նշել, որ ոչ միայն Հայաստանում, այլ նաև շատ երկրներում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի արդյունավետությունը և տարածվածությունը ազատագրկման վայրերում հենց բխում է դրանց ճկուն լինելու հանգամանքից, որի շնորհիվ այն կարող է իրականացվել նաև սահմանափակում ունեցող հաստատություններում: Այնուամենայնիվ, եթե անդրադառնանք առկա ենթակառուցվածքներին, ապա առաջնային է կրթական տարածքների առկայության հարցը: Անհրաժեշտ է նշել, որ ներկա ՔԿՅ-ներում առկա տարածքները, դրանց կահավորման առկա իրավիճակը ցույց է տալիս, որ կարիք կա, որպեսզի դրանք վերակառուցվեն, նորոգվեն, համալրվեն համապատասխան կրթական կահավորմամբ: Մինևույն ժամանակ այս չափորոշիչները պետք է հաշվի առնվեն նաև արդեն իսկ պլանավորվող ՔԿՅ-ի շենքային պայմանների նախագծման աշխատանքներում: Պետք է նշել, որ դեռևս 2011-2012թթ. ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ, ելնելով տվյալ ժամանակ գործող հանցավորության դեմ պայքարի ռազմավարության պահանջներից, ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը գնահատելու էր ՔԿՅ-ներում արհեստագործական ուսումնարանների ստեղծման, միջին մասնագիտական կրթության կազմակերպման հարցերը: Հանձնաժողովը բացասական եզրակացություն էր տվել՝ հիմք ընդունելով, որ առկա շենքային պայմաններն անհամապատասխան են կրթության տվյալ ձևի համար սահմանված չափորոշիչներին: Անշուշտ, դա չի ենթադրում կրթության բացառում, այլ հակառակը՝ ՔԿՅ-ներում կրթական միջավայրի խնդրի բարձրաձայնում, և կրթության առաջնայնության խնդրի վեր հանում՝ ջատագովելով նաև շենքային ենթակառուցվածքների բարելավումը:

Ելնելով օրենսդրությամբ սահմանված կրթական ծրագրերի առանձնահատկություններից ու տարատեսակներից՝ թե՛ ֆորմալ, և թե՛ կրթական այլ

<sup>7</sup> «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդված, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված և այլն:

ծրագրերի կարևորության համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել նաև գրքերից, ամսագրերից, որևէ մասնագիտական գրականությունից ու այլ տպագիր նյութերից օգտվելու դատապարտյալների իրավունքներն ու հնարավորությունները՝ առնվազն որպես ինքնագարգացման, ինքնուսուցման ու անձնական աճի միջոցներ:

Իրենց հաշվին կամ բաժանորդագրության ձևով ամսագրերից, թերթերից ու այլ գրականությունից օգտվելու համար, վերը նշված իրավական ակտի կարգավորմամբ, դատապարտյալը ՔԿՀ-ի աշխատակցի միջոցով դիմում է հիմնարկի պետին: Ավելին, բաժանորդագրության ձևակերպումը ևս կատարում է ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչը:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով, որ նման պրակտիկան գրեթե չի գործում, ցանկալի է, որ ՔԿ հիմնարկներն ունենան հիմնական բաժանորդագրություն, և թերթերը, արդիական գրականությունը և այլ տպագիր նյութեր հասանելի լինեն բոլոր դատապարտյալներին ընթերցասարահներում:

#### **1.2.4 Կրթության կազմակերպումը՝ ըստ ազատագրված անձի իրավական կարգավիճակի**

Թեպետ ոլորտային օրենսդրությունը խիստ տարբերվող հատկանիշներով չի օժտում կամ չի զրկում ՔԿ հիմնարկներում պահվող ազատագրվածներին, այսուհանդերձ, դրանք որոշ չափով առկա են, և կարևոր է ընդգծել առկա որոշ տարբերություններ՝ հաշվի առնելով ազատագրվածների տարիքը, քրեադատավարական կարգավիճակը, պատժատեսակը և այլ հատկանիշներ:

##### ***Կալանք պատժատեսակի դատապարտյալներ***

Սույն պատժատեսակն ունի որոշակի յուրահատկություններ, որոնք կարող են խոչընդոտել կրթական (ուսումնական) ծրագրերի իրականացումը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգիրքի 57-րդ հոդվածը, պատիժների տեսակավորման մեջ ամրագրելով կալանք պատժատեսակը, նախատեսում է հիմնականում հետևյալ կարևոր գործոնները, որոնք կարող են դերակատարում ունենալ ամբողջական ու արդյունավետ կրթություն կազմակերպելու իմաստով.

- 1) այն կարող է կիրառվել միայն 16 տարին լրացած (ոչ պակաս) անձանց նկատմամբ,
- 2) այն կարող է կիրառվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար,
- 3) տևողությունը՝ 15 օրից մինչև 3 ամիս է (16-18 տարեկան անձանց դեպքում՝ մինչև 2 ամիս),
- 4) այն անազատության մեջ անձին պահելու ձևերից մեկն է՝ հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում:

Ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի պահանջներից՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, կարգավորելով կալանք կրող դատապարտյալների պահման պայմանները և ապահովելով հնարավոր «խիստ պայմանները», արգելում է նաև դատապարտյալի համար հատկապես նախնական կամ միջին մասնագիտական կրթություն կազմակերպելը: Թեպետ օրենքը կրթական այլ ծրագրերի չի անդրադառնում, բայց պահման պայմանների խստությունից առնվազն պարզ է դառնում, որ, առավելագույնը 3 ամիս ժամկետով, անձը «կտրվում է արտաքին աշխարհից», հետևաբար նաև՝ դասավանդողներից, մասնագիտական անհրաժեշտ նյութեր ու գրականություն՝ որպես հանձնուբ, ստանալու իրավունքից և այլն:

##### ***Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրված դատապարտյալներ***

Կրթության կազմակերպման տեսակետից, ցմահ կամ որոշակի ժամկետով ազատագրված դատապարտված իրավական կարգավորումները նույնական են ՀՀ օրենսդրությամբ: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ընդհանրական կանոնակարգելով

դատապարտյալի՝ կրթությունն ստանալու իրավունքը պարունակում է նաև ավելի որոշակի կարգավորումներ՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմին պարտավորեցնելով միջոցներ ձեռնարկել դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար:

Այս առումով, անհրաժեշտ է դասակարգում և հատուկ ուշադրություն դարձնել հատկապես երկարաժամկետ ու ցմահ ազատազրկվածներին՝ նրանց տալով առավել ընդգրկուն հնարավորություններ հենց կրթությունն ստանալու գործընթացում: Իրավունքների ու իրավունքներն ապահովող գործոնների նման միախառնության պատճառով է նաև, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում ևս միաձուլված ու մեկ հարթության, նաև մեկ գլխում են դիտարկվում թե՛ աշխատանքն ու զբաղվածությունը, թե՛ մշակութային ու մարզական միջոցառումները և թե՛ կրթությունը: Ու թեպետ, կրթության ու կրթվելու գործոն կարելի է նկատել մարդկային գրեթե ցանկացած գործունեության տեսակում, այդուհանդերձ, նման կարգավորումներով, կրթությունը հաճախ կարող է դիտարկվել որպես «հերթական միջոցառում», ինչը կարող է նվազեցնել թե՛ ՔԿՀ վարչակազմի, թե՛ դատապարտյալների կողմից կրթվելու ուղղությամբ ցուցաբերված ջանքերը և թե՛ «կրթության»՝ օրենսդրությամբ սահմանված բնույթը (անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար):

### **Անչափահաս դատապարտյալներ**

Անչափահասների կրթությունը, կրթական ծրագրերի մասնակցությունը դիտարկվում է դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներից մեկը, այն տարբերությամբ միայն, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքին ամրագրում է ուղղման միջոցների առանձին տեսակների **պարտադիր բնույթն անչափահասների համար՝ չկոնկրետացնելով դրանք**: Ու թեև օրենսդիրը չի առանձնացնում, թե որ տեսակներն են նրանց համար պարտադիր, այդուհանդերձ սա հնարավորություն է ստեղծում, օրինակ՝ հենց կրթական ծրագրերը համարել պարտադիր:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագծի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվում է 30 տարին չլրացած դատապարտյալների հիմնական կրթություն: Անչափահաս դատապարտյալի համար հիմնական կրթությունը պարտադիր է:

Անչափահաս դատապարտյալների ուղղման միջոց է համարվում նրանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին մասնակցությունը, իսկ անչափահաս դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին պարտադիր է:

Այս պահանջը պետք է ենթադրի նաև ՔԿՀ-ի վարչակազմի համարժեք պատրաստվածությունն ու որակավորում: Այս իմաստով, ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը, հիմք ընդունելով վերը ներկայացված օրենսդրական պահանջները, սահմանում է ՔԿՀ-ի վարչակազմի համար՝ նախատեսելով անչափահաս դատապարտյալի ազատ ժամանակը նպատակաուղղված կազմակերպելու պարտավորությունը:

Անչափահաս դատապարտյալները *չեն կարող ստանալ հանրակրթություն և նախնական մասնագիտական կրթություն դրսեկության ձևով*: Սույն սահմանափակումը թերևս մեկնաբանման կամ վերանայման կարիք ունի՝ հաշվի առնելով առնվազն հետևյալ հանգամանքները. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ.-ի սեպտեմբերի 6-ի թիվ 1028-Ն որոշումը չունի նման սահմանափակում: Ավելին, «Նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է արհեստագործական կրթությունը և ուսուցումը, ի թիվս այլուր, իրականացնել նաև ՔԿՀ-ներում: Հաջորդիվ, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով հանրակրթական հիմնական ծրագրերը, նախատեսում է, որ դրանք իրականացվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում և օրենքով սահմանված կարգով՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում: Իսկ հիմք ընդունելով ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները, «փակ, կիսափակ, կիսաբաց, բաց և բուժական ուղղիչ հիմնարկների շենքերում և շինություններում, ելնելով դատապարտյալներին պահելու՝ օրենքով նախատեսված պայմանների առանձնահատկություններից, պարտադիր տեղակայվում են նաև... դպրոցներ»:

**Այսպիսով,** եթե ամփոփենք դատապարտյալների կրթության կազմակերպման հիմնախնդիրները՝ ուղղիչ հիմնարկների տեսակների և պահման պայմանների համատեքստում, **ապա կարելի է եզրակացնել, որ.**

- օրենսդրությամբ սահմանված կրթության իրավունքը գործնական իրացման սահմանափակումներ ունի թե՛ ՔԿՀ-ների շենքային պայմանների, թե՛ կրթության առանձնացված տարածքների բացակայության պատճառով,
- որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկված դատապարտյալների համար կրթության կազմակերպման պահանջները նույնական են օրենսդրության մեջ, չնայած այն հանգամանքին, որ դրանք տարբեր բնույթ և ծավալ են ենթադրում և պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ՝ կախված անձի ՔԿՀ-ում գտնվելու ժամկետների հետ,
- անչափահասների կրթության իրացման համատեքստում տարբեր օրենսդրական նորմերի միջև առկա է հակասություն,
- կարգավորված չէ հանրակրթություն չունեցող, սակայն 19 տարին լրացած անձանց կրթության իրականացման հարցը:



### 1.3. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՊԱՏՇԱԾ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Կրթության դերակատարությունը ԶԿՅ-ում կարևորվում է ինչպես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ հանցավորության կանխարգելման, իրավախախտում կատարած անձանց վերականգնման և ուղղման, ի վերջո պատժի նպատակների իրականացման համատեքստում:

ՀՀ օրենսդրությամբ, վերականգնողական գործունեության ողջ բովանդակությունը սահմանված է ուղղման հասկացության մեջ: Ուղղումը պատժի հիմնական նպատակներից մեկն է: Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի՝ դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: Իսկ համաձայն նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են՝

- պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները,
- դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները,
- դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը,
- հասարակական ներգործությունը:

ՀՀ արդարադատության նախարարի 2016թ.-ի հուլիսի 13-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2008թ.-ի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N279-Ն հրամանով սահմանվել են՝ *դրական բնութագրվող, պատժի հետագա կրելու կարիք չունեցող և ուղղված դատապարտյալը կարող է վաղաժամկետ ազատվել պատժի հետագա կրումից:*

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելուց հետո դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը նախատեսված հանգամանքների վերաբերյալ քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցների կամ կարգապահական գումարտակի հրամանատարի միջնորդագրի քննարկման արդյունքում հանգում է հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, քանի որ՝

- 1) պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ<sup>8</sup>, և
- 2) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է<sup>9</sup>:

<sup>8</sup> Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը. 2) պատժի կրման ընթացքում կարգապահական տույժի առկայությունը. 3) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն. 4) պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, կամ եթե չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով. 5) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

<sup>9</sup> Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. 1) դատապարտյալի տարիքը, դատապարտյալի տարիքը հանցագործություն կատարելու պահին. 2) հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը.

3) ռեցիդիվի առկայությունը. 4) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը. 5) հանցագործությամբ պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը. 6) նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ. 7) որոշակի հակումները, հնարավոր

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ ՀՀ արդարադատության նախարարի 2019թ.-ի հունիսի 4-ի N198-Լ հրամանի և ՀՀ արդարադատության նախարարի 2018թ.-ի հուլիսի 12-ի N336-Լ հրամանի հավելվածով սահմանվել են գեկույցի կազման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման չափորոշիչները, որոնց համաձայն յուրաքանչյուր գնահատման վավերապայմանին տրվում է համապատասխան միավորը: Գնահատման վավերապայմանները ներկայացված են 14 խմբով, որոնց առավելագույն միավորներն են 5, 4, 3 և 2:

Յուրաքանչյուր խմբում առկա են ենթախմբեր 0-ից մինչև առավելագույն միավոր գնահատմամբ: Օրինակ՝ պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը գնահատելիս 3 միավոր տրամադրվում է, եթե պատժի կրման ընթացքում դատապարտյալը ստացել է աշխատանքային-մասնագիտական, կրթական որակավորում, դիպլոմ, 2 միավոր՝ եթե մասնակցել է կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին, 1 միավոր՝ եթե ցանկացել է մասնակցել, սակայն ՔԿՀ-ը նշված միջոցառումների կազմակերպման հնարավորություն չի ապահովել, և 0 միավոր՝ եթե չի մասնակցել:

Չափորոշիչների գումարային արդյունքը և հնարավոր առավելագույն միավորը 43-ն է: Դատապարտյալը կարող է դիմել պայմանական վաղաժամկետ ազատման համար, եթե չափորոշիչների գումարային արդյունքը 28 և ավել է:

Համաձայն չափորոշիչի՝ «Պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը» **առավելագույնը գնահատվում է 3 միավոր**, իսկ, օրինակ, պատժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը՝ առավելագույնը 4 միավոր և այլն: Ինչպես երևում է կրթական ծրագրերի մասնակցությունը կազմում է բավականին ցածր չափաբաժին չափորոշիչների ընդհանուր գումարում: Ավելին՝ կրթական ծրագրերի մասնակցությունը (դատապարտյալը ստացել է աշխատանքային-մասնագիտական, կրթական որակավորում, դիպլոմ) հավասարեցված է պատժի կրման ընթացքում առնվազն 3 ամիս աշխատելուն, իր կատարած արարքն ընդունելուն և դրա համար զղջալուն, մասնակցությանը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին, ինչպես նաև ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը պահպանելուն: Իհարկե, հաշվի առնելով, որ վերը նշված չափորոշիչները դեռ նոր են փորձարկվում, և բացի տեսական անհամապատասխանություններից հնարավոր է լինեն նաև գործնական բարդություններ, որոշակի ժամանակ անց դրանք վերանայման կարիք կունենան:

**Այսպիսով**, համեմատելով չափորոշիչները՝ ակնհայտ է համամասնության խախտումը, քանի որ 5 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելը՝ համապատասխան դիպլոմ ստանալով, իր ազդեցության բնույթով չի կարող հավասարվել 3 ամիս աշխատելուն կամ կատարված արարքի համար հիպոթետիկ զղջմանը կամ ընտանիքի հետ պարբերաբար տեսակցություններ ունենալուն: Ավելին, քննարկվող չափորոշիչներում որևէ կերպով նախանշված չէ նաև կրթության տևողությունը:

կախվածությունները, նախասիրությունները. 8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին. 9) ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը. 10) սոցիալական միջավայրը. 11) առողջական, այդ թվում՝ հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը. 12) դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

## ԳԼՈՒԽ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

### 2.1 Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների վերաբերյալ վիճակագրությունը՝ կրթության համատեքստում

Սույն ուսումնասիրությունն իրականացնելու պահին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՀ-ներում պատիժ էին կրում 1075 դատապարտյալ<sup>10</sup>, որոնցից 271-ը՝ 19-30 տարեկան (ընդհանուր դատապարտյալների 25,2%-ը), 773-ը՝ 31-63 տարեկան (ընդհանուր դատապարտյալների 71,9%-ը), իսկ 31-ը՝ 64 և ավել տարեկան (ընդհանուր դատապարտյալների 2,9%-ը):

Դատապարտյալների կրթության վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Կրթություն/տարիք	մինչ 18 տարեկան		19-30 տարեկան		31-63 տարեկան		64 և ավել տարեկան		Ընդհանուր	
		որից կանայք		որից կանայք		որից կանայք		որից կանայք		որից կանայք
Թերի միջնակարգ կրթություն	-	-	62	1	171	9	9	-	242	10
Միջնակարգ կրթություն	-	-	179	4	461	10	11	-	651	14
Միջին մասնագիտական կրթություն	-	-	8	-	35	3	6	1	49	4
Թերի բարձրագույն	-	-	7	-	18	-	-	-	25	-
Բարձրագույն	-	-	15	-	87	5	5	-	107	5
Հետբուհական	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ոչ ֆորմալ կրթություն, մասնագիտական հմտությունների դասընթացներ	-	-	-	-	1	1	-	-	1	1
<b>Ընդհանուր</b>			<b>271</b>	<b>5</b>	<b>773</b>	<b>28</b>	<b>31</b>	<b>1</b>	<b>1075</b>	<b>34</b>

#### Աղյուսակ 1. Դատապարտյալների բաշխվածությունն ըստ կրթության, տարիքի

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ դատապարտյալների մեծամասնությունը (651 անձ) ունի միջնակարգ կրթություն, միևնույն ժամանակ 241 դատապարտյալ ունի թերի միջնակարգ կրթություն:


Ընդհանուր առմամբ՝ 1075 դատապարտյալներից կանանց տեսակարար կշիռը չկազմում է 34 անձ կամ ընդհանուր դատապարտյալների 3,2%-ը): Հետազոտության իրականացման ժամանակահատվածում կար 1 անչափահաս դատապարտյալ, կալանք պատիժ կրող 1 դատապարտյալ, իսկ ցմահ ազատազրկման դատապարտյալները 82-ն էին:

**Այսպես**, բարձրագույն կրթություն ունեցող դատապարտյալների թիվը 107-ն է 1075-ից կամ 10%, սակայն այն առավել բարձր է «Երևան կենտրոն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում: Քանի որ «Վարդաշեն» ՔԿՀ-ում պատիժ են կրում դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալը, այնտեղ գտնվող 62 դատապարտյալներից 28-ը, այսինքն՝ 45,2%-ն ունենին

<sup>10</sup> Տվյալները տրամադրվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից (30.09.2019 դրությամբ)

բարձրագույն կրթություն: «Երևան կենտրոն» ՔԿՅ-ում պատիժ էին կրում 5 դատապարտյալ, որից 4-ը, այսինքն՝ 80%-ն ունեն բարձրագույն կրթություն:

**Մտահոգիչ է թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների թիվը:** Այսպես, ըստ ՔԿՅ-ների՝ թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների բաշխվածությունը հետևյալն է




**Գծապատկեր 2. Թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալներ**

Թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների տեսակարար կշիռը 22,5% է, որից 25%-ը 19-30 տարեկան են և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագծով նրանց համար միջնակարգ կրթությունը կդառնա պարտադիր: Սակայն թերի միջնակարգ կրթություն ունեցողների գերակշիռ մեծամասնությունը՝ 242 դատապարտյալներից 171-ը կամ 70,7%-ը՝ 31-63 տարեկան անձինք են, ում համար միջնակարգ կրթությունը պարտադիր չէ թե՛ գործող օրենսդրությամբ, թե՛ նախագծով: Ենթադրվում է, որ նրանց համար օգտակար կլինի ոչ ֆորմալ կրթության կազմակերպումը: Դատապարտյալների մեծամասնությունն ունեն միջնակարգ կրթություն՝ ընդհանուր դատապարտյալների 60,6%-ը: Կալանք կրող միակ դատապարտյալը նույնպես ունի միջնակարգ կրթություն:

Ցմահ ազատազրկման դատապարտյալների կրթական մակարդակը ներկայացնենք առանձին՝ ելնելով այս պատժի ՀՀ-ում ամենախիստ լինելու հանգամանքով և խիստ մեկուսացման պայմաններից ելնելով: Ցմահ ազատազրկման դատապարտյալներն ունեն հետևյալ բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի:

**Գծապատկեր 3. Ցմահ ազատագրվածների դատապարտյալների կրթական մակարդակը**




Պատիժ կրող դատապարտյալների մեծամասնությունը դատապարտված են սեփականության, տնտեսական և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար: Առհասարակ ըստ կատարված հանցագործության բնույթի դատապարտյալներն ունեն հետևյալ բաշխվածություն՝

1. մարդու դեմ ուղղված հանցագործությունների համար պատիժ են կրում ընդհանուր դատապարտյալների թվի 37,2%-ը,
2. սեփականության, տնտեսական և տնտեսական գործունեության դեմ ուղղված՝ 40,2%-ը,
3. հասարակական անվտանգության դեմ ուղղված՝ 1,5%-ը,
4. համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված՝ 0,8%-ը,
5. հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված՝ 1,8%-ը,
6. բնակչության առողջության դեմ ուղղված՝ 11,4%-ը,
7. պետական իշխանության դեմ ուղղված՝ 1,7%-ը,
8. այլ հանցագործությունների համար՝ 5,4%-ը:

Կրթություն/ հանցագործության բնույթը	մարդու ընդ որում	սեփականության, տնտեսական և տնտեսական գործունեության ընդ որում	հասարակական անվտանգության ընդ որում	համակարգային տեղեկատվության անվտանգության ընդ որում	հասարակական կարգի և բարոյականության ընդ որում	բնակչության առողջության ընդ որում	պետական իշխանության ընդ որում	Այլ	Ընդամենը
Թերի միջնակարգ կրթություն	92	111	3	0	2	26	3	14	251
Միջնակարգ կրթություն	251	252	10	2	16	70	6	37	644
Միջին մասնագիտական կրթություն	12	23	0	3	1	8	1	1	49
Թերի բարձրագույն	12	4	0	0	0	3	1	0	20
Բարձրագույն	21	29	3	3	0	12	7	3	78
Հետբուհական	0	0	0	0	0	0	0	0	0
<b>ԸՆԴԱՄԵՆՐ</b>	<b>388</b>	<b>419</b>	<b>16</b>	<b>8</b>	<b>19</b>	<b>119</b>	<b>18</b>	<b>55</b>	<b>1042</b>

Աղյուսակ 2. Դատապարտյալների բաշխվածությունը  
կրթություն/ կատարված հանցագործության բնույթ

Դատապարտյալների ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ վիճակագրությունն ուսումնասիրվել է ըստ ինքնագործ միավորումների մասնակցության: Փաստացի պարզվել է, որ դատապարտյալները մասնակցում են մարզական, կրոնական, մշակութային և լուսավորչական միավորումներին: Սակայն պետք է նշել, որ դատապարտյալների մասնակցությունն ինքնագործ միավորումներին ցածր է: **1075 դատապարտյալներից** այդ միավորումներին մասնակցում է ընդամենը **90 դատապարտյալ**, այսինքն ընդհանուր դատապարտյալների թվի միայն 8,4%-ը: Ինքնագործ միավորումներին մասնակցող դատապարտյալների բաշխվածությունն ըստ միավորման տեսակների հետևյալն է՝



Գծապատկեր 4. Դատապարտյալների բաշխվածությունն  
ըստ ինքնագործ միավորումների տեսակների

Կին դատապարտյալներն առավել շատ են մասնակցում ինքնագործ միավորումներին: Եթե 1041 տղամարդ դատապարտյալներից ինքնագործ միավորումներին մասնակցում է 63 դատապարտյալ, այսինքն՝ տղամարդ դատապարտյալների թվի միայն 6,1%-ը, ապա կին դատապարտյալների դեպքում՝ 34 կանանցից 27-ը մասնակցում են այդ միավորումներին, այսինքն՝ կին դատապարտյալների 79,4%-ը: Դատապարտյալների ինքնագործ միավորումների մասնակցության վիճակագրության առանձնահատկություններից այն է, որ կին դատապարտյալները կրոնական միավորումներին չեն մասնակցում, իսկ տղամարդ դատապարտյալները՝ լուսավորչական:

Տղամարդկանց համար նախատեսված ՔԿԶ-ներում ինքնագործ միավորումներում մասնակցության ամենաբարձր ցուցանիշներն առկա են «Սևան» ՔԿԶ-ում (29 դատապարտյալ) և «Կոշ» ՔԿԶ-ում (20 դատապարտյալ), իսկ առհասարակ մասնակցությունը բացակայում է «Գորիս», «Արմավիր», «Նուբարաշեն», «Յրագղան», «Արթիկ», «Երևան կենտրոն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿԶ-ներում:

Չետագոտության իրականացման ժամանակահատվածում ՉՉ արդարադատության նախարարության կողմից հետազոտական թիմին է տրամադրվել նաև 2020թ.-ին դատապարտյալների համար իրականացվող ծախսերի նախահաշվարկը, համաձայն որի՝ մեկ դատապարտյալի համար միջին օրական նախատեսվող ծախսը 2020թ.-ին նախատեսվել է 1005 ՉՉ դրամի չափով: Միևնույն ժամանակ, նախահաշվարկում արտացոլված չէ կրթական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվող գումարի չափաբաժինը. վերջինիս մասին տվյալները ներկայացվում են հաջորդիվ (Բաժին 2.2 Առկա կրթական ծրագրեր):

Ծախսման ուղղությունները	Դատապարտյալների համար նախատեսված միջինացված ծախսերը 2020թ.-ին (ՉՉ դրամ)			
	1 անձի օրական միջին ծախսը	1 անձի ամսական միջին ծախսը	1 անձի տարեկան միջին ծախսը	ընդամենը միջին տարեկան (2300 անձի հաշվարկով)
սննդամթերք	860	26.200	314.540	723.442.000
անկողնային պարագաներ			14.500	33.350.000
հիգիենիկ պարագաներ, մաքրող, տնտեսական ապրանքներ		1.150	13.800	31.740.000
հանդերձանք (1270 դատապարտյալ)			45.100	57.277.000
Ընդամենը				845.809.000

Աղյուսակ 3. Դատապարտյալների համար նախատեսված միջին տարեկան ծախսերը 2020թ., (2300 անձի հաշվարկով)

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված վիճակագրական տվյալները ելակետային և առաջին անգամ կրթության աստիճանի վերաբերյալ հավաքագրվող ցուցանիշներ են, և հաշվի առնելով, որ կրթության մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ստացումը կանոնակարգված և համակարգված ձևով դեռ ներդրված չէ քրեակատարողական ծառայությունում հավաքագրվող վիճակագրության մեջ, ցանկալի է առաջնահերթ մշակել համապատասխան ձևանմուշներ և ներդնել դրանք՝ դատապարտյալների կրթական ցուցանիշների հետագա դինամիկան և միտումները բացահայտելու համար:

Միաժամանակ՝ ելնելով այս առաջնային ցուցանիշներից, կարելի է փաստել, որ բավականին բարձր է թերի միջնակարգ կրթություն ունեցող անձանց թիվը: Այս իմաստով,

համապատասխան նախարարությունների առաջնային խնդիրն է օրենսդրական բարեփոխման միջոցով հնարավորություն ստեղծել այս անձանց կրթության առաջնային աստիճանի, հանրակրթության ապահովման համար: Հաշվի առնելով, որ այս անձանց շրջանում բավականին մեծ է միջին տարիքի անձինք, ապա աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման համար թերևս անհրաժեշտ է հանրակրթություն և կոնկրետ մասնագիտական հմտությունների դասընթացի համալրում: Կրթական ցածր աստիճանը մի կողմից վկայում է կրկնահանցավորության ռիսկի մասին, մյուս կողմից ինտեգրման ռեալ հնարավորություն է աշխատունակ տարիքի անձանց տնտեսական գործունեությունն ազատվելուց հետո իրատեսական դարձնելու առումով:



## 2.2.ԱՌԿԱ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԿՅ-ներում կրթական ծրագրերի մասին խոսելիս անպայման պետք է անդրադառնալ դրանց զարգացման հիմքերին և զարգացման միտումներին:

Ներկայումս ՔԿՅ-ներում պետության կողմից ֆինանսավորվում են երկու ծրագիր, որոնք իրականացվում են 12 ՔԿՅ-ներից միայն 4-ում՝ «Աբովյան», «Արմավիր», «Նուբարաշեն» և «Արթիկ» ՔԿՅ-ներում:

### ➤ Ֆորմալ կրթական ծրագրեր: Հանրակրթություն

Մինչև 2015թ.-ը հանրակրթությունն իրականացվել միայն «Աբովյան» ՔԿՅ-ում, որի տարածքում գործել է Աբովյանի թիվ 2 արհեստագործական ուսումնարանը՝ ունենալով երկու հիմնական ծրագիր՝ հանրակրթական և նախնական մասնագիտական: 2015թ.-ից սկսած, անչափահասների թվի նվազեցումից, և անչափահասների տեղամասը փակելուց հետո որոշում է կայացվել դադարեցնել հանրակրթության ծրագիրը, չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր տարի միջինում 5-15 երեխա գտնվել է հիմնարկում և փաստացի այդ ընթացքում դուրս է մնացել կրթությունից:

Տվյալ ժամանակահատվածում ՀՀ կրթության և գիտության նախարարության ներքո գործող Աբովյանի թիվ 2 ուսումնարանի լուծարումից հետո, հաշվի առնելով հանրակրթության կազմակերպման կարևորությունը, ՔԿՅ-ում գտնվող անչափահասների հիմնական կրթության ապահովման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) նախաձեռնել է ազատագրված ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթության իրականացման գործընթաց: Կենտրոնը ՔԿՅ-ներում հանրակրթություն իրականացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ.-ի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ.-ի հոկտեմբերի 19-ի N 1398-Ա/2 հրամանով հաստատվել են նաև կենտրոնի կողմից մշակված ազատագրված ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները (այլընտրանքային/հեղինակային/ կրթական ծրագիր):

Կենտրոնը 2019թ.-ի սեպտեմբերի 2-ից երեք ՔԿՅ-ներում՝ «Աբովյան», «Արմավիր» և «Նուբարաշեն», մեկնարկել է ազատագրված ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված մինչ 19 տարեկան անձանց հանրակրթության կազմակերպումը: *Ընդհանուր առմամբ հանրակրթական ծրագրում ընդգրկված է` 9 աշակերտ:* Սույն ծրագրի փաստացի բյուջեն 2019թ.-ին կազմել է 8.384.8 հազ. դրամ:

Համայնքային բյուջեի ֆինանսավորմամբ գործում է նաև «Արթիկ» ՔԿՅ-ի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ը, որն իրականացնում է 9-12 դասարանների հանրակրթություն:

## ➤ Ոչ ֆորմալ կրթական ծրագրեր

Պետության կողմից ֆինանսավորվող մյուս կայուն ծրագիրը «Գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրն է:

2004-2008թթ.-ին որպես անչափահասների վերաինտեգրման պիլոտային ծրագիր, միջազգային դոնոր կազմակերպության աջակցությամբ և Տրտու հասարակական կազմակերպության կողմից իրականացվող այս ծրագիրն ունեցել է արվեստի միջոցով երեխային կրթելու և դաստիարակելու նպատակ: Ծրագիրը բավականին նորարարական է եղել, և 2007թ.-ից այն ներառվել է ՀՀ մշակույթի նախարարության գործունեության ներքո գործող պետական ոչ առևտրային կազմակերպության ծրագրերի շարքում:

2012թ.-ից, հաշվի առնելով, որ մշակութային ծրագիրն իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող ՔԿՀ-ներում, ծրագիրն իրականացնող ՊՈԱԿ-ը տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարություն և գործել որպես «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն»: 2017թ.-ի ավարտին, վերջինս ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմավորվել է՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, որն էլ այսօր իրականացնում է «Գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրը:

Սույն ծրագիրն ի սկզբանե իրականացվել է միայն անչափահասների շրջանում, ապա ընդլայնվել է նաև դատապարտված կանանց շրջանում: 2014-2016թթ. իրականացվել է «Աբովյան» ՔԿՀ-ում գտնվող անչափահասների և կանանց համար, 2016թ.-ի փետրվարից սկսած՝ ներառել «Արմավիր» ՔԿՀ-ը:

2017թ.-ին Ծրագրի փաստացի բյուջեն կազմել է 15.973.6 հազ. դրամ, իսկ 2018թ.-ին այն զգալի ավելացել է՝ կազմելով 36.927.4 հազ. դրամ՝ **ապահովելով կրթություն, շարունակական կրթական զբաղվածություն շուրջ 110 անձանց համար երկու ՔԿՀ-ներում:**

2018թ.-ից, Ծրագրի գեղագիտական բաղադրիչը համալրվել է կրթական մասով, մասնավորապես ներառվել են հետևյալ առարկաները՝

- «Հիմնական գրագիտություն»
- «Համակարգչային հմտություններ»
- «Կյանքի հմտություններ և սոցիալական ուսուցում»

Իսկ 2019թ.-ին ներառվել են նաև հետևյալ առարկաները՝

- «Բիզնես գրագիտություն»
- «Տարրական գրագիտություն»

**Հավելված 2-ով** ներկայացված է Ծրագրի ընդհանուր նկարագիրը՝ ըստ դասաժամերի և առարկայացանկի և թիրախ խմբերի՝ անչափահասներ, կանայք, որոշակի ժամկետով դատապարտված անձինք և ցմահ դատապարտյալներ:

Բացի պետական ֆինանսավորումից, ՔԿՀ-ներում կրթական ծրագրեր իրականացվել են նաև հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ և միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Հասարակական նախաձեռնությամբ հիմնականում պիլոտային ծրագրեր իրականացվել են «Աբովյան» ՔԿՀ-ում: Այսպես, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ 2017թ.-ից «Աբովյան» ՔԿՀ-ում կահավորվել է վարսահարդարման ուսուցման տարածք, դասասենյակ, իրականացվել են դասընթացներ: «Աբովյան» ՔԿՀ-ում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի ֆինանսավորմամբ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» կողմից

առանձնացվել են մասնագիտական ուսուցման համար սենյակներ, կազմակերպվել է 8 դասընթաց, որոնց մասնակցել են 75 անձ, վկայական ստացել են 58-ը<sup>11</sup>:

**Այսպիսով**, հասարակական կազմակերպությունների և պետության կողմից իրականացվող ծրագրերն իրականացվում են սահմանափակ թվով անձանց ներգրավմամբ՝ առավելապես 3 քԿՅ-ներում: Դրանք հասանելի չեն այլ քԿՅ-ներում պատիժ կրող անձանց համար: Հարկ է նշել, որ հասարակական նախաձեռնություններն ու միջազգային աջակցությամբ իրականացված ծրագրերը որոշ դեպքերում կրում են հատվածային բնույթ՝ այդ կերպ առաջ բերելով ծրագրերի կայունություն և շարունակականության խնդիրներ: Մինևույն ժամանակ, շատ կարևոր է այս ծրագրերի և աշխատաշուկայում դրանց ազդեցության կապի գնահատումը՝ ծրագրերի ազդեցությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

<sup>11</sup> <https://ombuds.am/images/files/dcc37ac516d1268bb59999f72c76d982.pdf>, էջ 251:



### 2.3. ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Եթե դիտարկենք կրթության ոլորտում իրականացված և իրականացվող ծրագրերի վերաբերյալ գնահատման և մշտադիտարկման հարցերը, ապա պետք է նշել, որ դրանք դեռևս գնահատվում են՝ ըստ լինել-չլինելու հանգամանքի, քանի որ կրթական ծրագրերի սակավությունը դեռևս հնարավորություն չի տալիս գնահատել և համեմատել դրանք շարունակական բարելավման նպատակով:

Եթե դիտարկենք, խնդրի բարձրացման, ջատագովության և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ապա այստեղ պետք է խոսել միջազգային և ներպետական կառուցակարգերի մասին, որոնք ունեն ուսումնասիրության գնահատման լիազորություններ և գործառույթներ:

#### Միջազգային մարմիններից՝

- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն,

#### Ներպետական մարմիններից՝

- ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ,
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Միջազգային լավագույն կառուցակարգը, որ ընդհանուր առմամբ առկա է քրեակատարողական համակարգում, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների մոնիտորինգի առումով, **խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն է**, որը գործում է Եվրոպայի Խորհրդի կողմից լիազորված կազմով, համապատասխան կոնվենցիայի շրջանակում տրված իրավասությամբ:

ՀՀ-ին վերաբերող վերջին զեկույցը եղել է 2016թ.-ին<sup>12</sup>, նաև նախատեսվել և իրականացվել են այցեր 2019թ.-ին: Իհարկե, այս կոմիտեի զեկույցները կարող են լինել նաև փակ, գաղտնի՝ կախված երկրի կողմից տրված համաձայնությունից: Սույն զեկույցը հրապարակվել է և ուսումնասիրության հնարավորություն է ընձեռում դիտարկելու կրթության վերաբերյալ մոտեցումը մարդու իրավունքների համատեքստում: Նշված զեկույցում կոմիտեն կոչ է անում ՀՀ կառավարությանը խցից դուրս, օգտակար զբաղվածությամբ ապահովելու միջոցներ ստեղծել ցմահ դատապարտված անձանց համար, ովքեր «Նուբարաշեն» ՔԿՀ-ից տեղափոխվել են «Արմավիր» ՔԿՀ՝ այդ միջոցների մեջ նշելով կրթությունը, աշխատանքը և սպորտը: Այս իմաստով պետք է նշել, որ ցմահ դատապարտվածների հետ կրթական ծրագիրը սկսվել է 2019թ.-ից վերը նկարագրված գեղագիտական կրթության ծրագրի շրջանակներում, սակայն այն դեռևս իրականացվում է միայն «Արմավիր» ՔԿՀ-ում:

Կոմիտեն իր գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցում նշել է, որ «...ազատագրված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն)»: Այս ծրագրերի իրականացումն կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների:»<sup>13</sup>

Եթե դիտարկենք ներպետական մարմինների առկայությունը և դերը գնահատման և մշտադիտարկման հարցում, ապա այստեղ երկու հիմնական մարմնի մասին է խոսքը:

<sup>12</sup> <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentid=09000016806bf46f>

<sup>13</sup> <https://rm.coe.int/1680696a3f> (դիտվել է 03.11.2019թ.-ին), էջ 13:

Առաջինը՝ **ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԻ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողությունն իրականացնող հասարակական դիտորդական խումբն է**, որի կողմից տարեկան հաշվետվությունները<sup>14</sup> տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարությանը ոլորտում առկա խնդիրների լուծման առաջարկություններով: Նշված հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք չեն առանձնացնում դատապարտյալների կրթությունը որպես հիմնախնդիր և չեն անդրադառնում դրա իրականացման բացերին՝ առավելապես շեշտադրելով ազատագրված անձանց այլ իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրներին, այդ թվում՝ առողջապահական խնդիրներ, սանիտարահիգիենիկ պայմաններ, նյութակենցադային ապահովում և այլ հարցեր:

Ներպետական հիմնական մարմինը, որը լիազորված է ազատագրված վայրերում մոնիտորինգի իրավասությամբ՝ **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն է**: Դատապարտյալների կրթության կարևորությանը պարբերաբար անդրադառնում է Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան և արտահերթ զեկույցներում<sup>15</sup>:

Դեռ 2016թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է դատապարտյալների կրթության իրավունքին, մասնավորապես մտահոգությունն հայտնելով «Աբովյան» ՔԿԻ-ի դպրոցի չգործելով<sup>16</sup>, ինչպես նաև «Արթիկ» ՔԿԻ-ի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի պայմաններով:

«Արթիկ» ՔԿԻ-ի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ը կազմակերպում է 9-12 դասարանների հանրակրթություն, սակայն այդ դասարանների համար նախատեսված դասագրքերի պակաս կա, բացակայում են ռուսերեն և անգլերեն լեզուներ դասավանդող ուսուցիչներ, ինչպես նաև ինքնին թերի են իրավական կանոնակարգումները<sup>17</sup>:

Նշված խնդիրները կրկին մատնանշվել են 2017թ.-ին հաշվետվությունում, քանի որ ոչ միայն չէին կարգավորվել, այլ նաև բացահայտվել էին լրացուցիչ բացեր, օրինակ՝ «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ում դասաժամերի և դրանց քանակի առանձնահատկություններ սահմանված չեն<sup>18</sup>:

2018թ.-ի հաշվետվությունում իրավիճակն արդեն մասնակի փոփոխվել էր: Մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ.-ի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ ու Կրթության և գիտության նախարարի հաստատմանն է ներկայացրել իր կողմից մշակված ազատագրված ձևով պատիժ կրող և (կամ) կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները:<sup>19</sup>

«Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի առնչությամբ Եական փոփոխություններ չեն եղել: Ըստ ՄԻՊ-ի գնահատման, ՀՀ կառավարության 2002թ.-ի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց թվին է պատկանում նաև Արթիկի

<sup>14</sup> [http://pmg.am/images/2009-2010\\_report.pdf](http://pmg.am/images/2009-2010_report.pdf), [http://pmg.am/images/2011-2012\\_report.pdf](http://pmg.am/images/2011-2012_report.pdf), [http://pmg.am/images/PMG\\_report\\_2013.pdf](http://pmg.am/images/PMG_report_2013.pdf), [http://pmg.am/images/2014-2015\\_PMG\\_Annual\\_report.pdf](http://pmg.am/images/2014-2015_PMG_Annual_report.pdf) (բոլոր հղումները դիտվել են 02.11.2019թ.-ին):

<sup>15</sup> Մանրամասն տես՝ <https://ombuds.am/images/files/dcc37ac516d1268bb59999f72c76d982.pdf>,

<https://ombuds.am/images/files/7f468a417e011c000153bd1bf64a05e0.pdf>,

<https://ombuds.am/images/files/ef5f900e0dc568da83fe60b18c608e2e.pdf>,

<https://ombuds.am/images/files/dc93cee447675a11dea5103ce6df4b9f.pdf>,

<https://ombuds.am/images/files/9b6666449107e18d5fb18747df8c227e.pdf> (բոլոր հղումները դիտվել են 02.11.2019թ.-ին):

<sup>16</sup> <https://ombuds.am/images/files/ef5f900e0dc568da83fe60b18c608e2e.pdf> (դիտվել է 02.11.2019թ.-ին), էջ 39:

<sup>17</sup> Նույն տեղում, էջեր 39-40:

<sup>18</sup> <https://ombuds.am/images/files/7f468a417e011c000153bd1bf64a05e0.pdf> (դիտվել է 02.11.2019թ.-ին), էջեր 83-84:

<sup>19</sup> <https://ombuds.am/images/files/dcc37ac516d1268bb59999f72c76d982.pdf> (դիտվել է 02.11.2019թ.-ին), էջ 250:

Երեկոյան դպրոցը, որի կանոնադրությունը<sup>20</sup> վերանայման կարիք ունի, քանի որ նրանում սահմանված չեն այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են կրթություն ստացող անձանց կարգավիճակով, դպրոցի կազմակերպա-իրավական առանձնահատկություններով, դպրոցի խորհրդի կազմը ձևավորելուն վերանայված պահանջներ ներկայացնելով և այլ պայմաններով:

Կրթական ծրագրերի սակավությունը բերում է նրան, որ դրանց միջև չկա մրցունակություն և որակի գնահատման չափորոշիչներ: Դրա համար այն մարմինները, որոնք գնահատողական գործառույթ ունեն, հիմնականում դիտարկում են ծրագրերի առկայության կամ բացակայության փաստը, այլ ոչ թե դրանց ազդեցությունը: Առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ ցանկալի է, որպեսզի ներդրվի ՔԿԳ-ներում ծրագրերի գնահատման առանձին համակարգ և սահմանվեն ոչ միայն քանակական, այլ նաև որակական չափորոշիչներ:

---


<sup>20</sup> <https://artiks.schoolsite.am/%d5%a4%d5%ba%d6%80%d5%b8%d6%81%d5%ab-%d5%af%d5%a1%d5%b6%d5%b8%d5%b6%d5%a1%d5%a4%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6/> (ոչսովորական 03.11.2019թ.-ին):

### ԳԼՈՒԽ 3. ԴԱՏԱԴԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Դատապարտյալների կրթության իրավունքի իրացման խնդիրն անմիջականորեն բխում է մարդու իրավունքների պաշտպանության պետության ստանձնած պարտավորություններից: Մինևույն ժամանակ այն նաև սերտորեն կապված է հանրային քաղաքականության, հանրային պահանջի, այդ թվում՝ հասարակության մեջ նման խնդրի ձևավորման և այն առաջ տանելու խնդրի մեջ: Այս հարցում շատ կարևոր է հանրային իրազեկումը, հանրային սկզբնային դիրքորոշումների վերաբերյալ տեղեկատվությունը, տարբեր խմբերի, այդ թվում՝ շահագրգիռ խմբերի շրջանում ջատագովությունը: Այդ նպատակով, կարևորելով դատապարտյալների կրթության հարցի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության խնդիրը՝ սույն ուսումնասիրությունը ներառել է երկու մեթոդով խմբային քննարկումների և առցանց հարցումների միջոցով ստացված տեղեկատվություն:

Խմբային քննարկումների մասնակիցների ընտրությունն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի մեթոդով: Խմբային քննարկումների մասնակցել են ընդհանուր թվով **35 մասնակից**, առցանց հարցմանը մասնակցել է **315 անձ**: Առցանց հարցման մասնակիցների **50.5 %-ը՝ 19-30 տարեկան** են, իսկ **42.9 %-ը՝ 31-63 տարիքային** խմբից են:

Գծապատկեր 5. Առցանց հարցման մասնակիցների սեռային բաշխումը




#### Արդյունքների վերլուծություն

**Հանրային ընկալումները նախ և առաջ տիպավորվել են ըստ դատապարտյալների կրթության հարցի նկատմամբ իրենց առաջնային դրական կամ բացասական դիրքորոշման:**

Ըստ խմբային քննարկման արդյունքների, մասնակիցների հիմնական մասը դրական է վերաբերում դատապարտյալների կրթության իրավունքին: Նրանց մի մասը գտնում է, որ որպես հասարակության լիիրավ անդամ նախկին ազատագրվածներն ունեն նույն իրավունքները, այդ թվում կրթության, ինչպես հասարակության մյուս անդամները: **Առցանց հարցման արդյունքներով ևս մասնակիցների 97.5 %-ը կարծում է, որ բանտարկյալներին անհրաժեշտ է կրթություն:**

Մինևույն ժամանակ, առցանց հարցման այն հարցին, թե «Արդյո՞ք Դուք կհամաձայնեիք սովորել դատապարտյալների/նախկին դատապարտյալների հետ համատեղ» մասնակիցները պատասխանել են՝ 59-ը պատասխանել է «ոչ», 31-ը՝ «պայմանավորված, թե ինչ հանցագործության տեսակ է», որը ևս կարելի է դիտարկել «ոչ» պատասխանի շրջանակում:

**Գծապատկեր 6. Առցանց հարցման արդյունքներ  
«Արդյո՞ք Դուք կհամաձայնեիք սովորել դատապարտյալների/Նախկին դատապարտյալների հետ համատեղ»**




Շատ կարևոր է, որ կրթության գործառույթի նկատմամբ բավականին լուրջ վստահություն և դերակատարություն է տրվում որպես հանցավորության կանխարգելման գործոն: Հետազոտության ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներն ընդգծել են ազատագրված վայրերում կրթության իրացման հետևյալ կարևոր գործառույթները՝

- կանխարգելիչ,
- ուղղիչ,
- ինքնաճանաչման և ինքնագարգացման գործառույթը,
- անկախության գործառույթ:

Անշուշտ այս գործառույթները շատ փոխկապված են և հստակ է, որ հանրության շրջանում առկա է կրթության դերի և նշանակության հստակ գիտակցում, պայմանավորված այն ազդեցությամբ, թե ինչ կարող է տալ կրթության իրավունքի իրացումը ՔԿԳ-ներում: Կրթության իրավունքի իրացումը, ուղիղ կապվում է ազատումից հետո նախկին դատապարտյալների աշխատանք գտնելու հնարավորության հետ: Խմբային քննարկումների մասնակիցները հիմնականում նշել են, որ դատապարտյալներին պետք է հնարավորություն տալ ստանալ կրթություն՝ որևէ աշխատանք ձեռք բերելու համար: Ընդ որում կրթությունը հիմնականում պետք է լինի որևէ հմտության ձեռք բերելուն ուղղված՝ վարսավիրություն, խոհարարություն, որևէ արհեստ: Միևնույն ժամանակ, առցանց հարցման շրջանակում «Ձեր կարծիքով ինչպիսի՞ կրթություն է պետք/անհրաժեշտ դատապարտյալներին» մասնակիցները պատասխանել են հետևյալ կերպ.






**Գծապատկեր 7. Առցանց հարցման արդյունքներ.**  
**«Ձեր կարծիքով ինչպիսի՞ կրթություն է պետք/անհրաժեշտ դատապարտյալներին**

Այս մոտեցումը ցույց է տալիս, որ աշխատաշուկայում նախկին դատապարտյալի ընդգրկվածությունը դիտարկվում է հիմնականում արհեստագործական աշխատանքների, և այդ աշխատանքի համար հմտություն պահանջող ոլորտներում:

Մոտեցումն այլ է բարձրագույն կրթության հասանելիության հարցում. ըստ ֆոկուս խմբի մասնակիցների, դատապարտյալներին բարձրագույն կրթություն ապահովելու պարտավորությունը չպետք է դրվի պետության վրա, քանի որ անվճար բարձրագույն կրթությունն ապահովելը ծախս է, որի համար պետության համար առավել առաջնահերթ խմբեր կան՝ զինվորականներ, սոցիալապես խոցելի խմբեր: Դատապարտյալներն ունեն բարձրագույն կրթություն ստանալու իրավունք, սակայն այն չպետք է լինի պետության հոգածության ներքո:

Մասնակիցների մի մասն էր միայն կարծում, որ կրթությունը ոչ միայն աշխատանք ստանալու, այլ որոշակի արժեհամակարգ ձևավորելու, վերափոխելու միջոց կարող է լինել: Այս կարծիքը կիսողներն ընդգծեցին դատապարտյալների՝ արվեստի կրթության, գիտությամբ զբաղվելու հնարավորություն տալու հարցը: Մասնակիցները նաև նշել են, որ աշխատանքը, որը նախկին դատապարտյալները կարող են ստանալ համապատասխան կրթություն ստանալուց հետո, կարող է ևս նպաստել անձի վերափոխմանը: Այս համատեքստում, կարևոր է դիտարկել նաև, թե արդյոք հասարակությունը պատրաստակամ է աջակցելու դատապարտյալներին, օրինակ՝ օգտվելով նրանց կողմից մատուցվող ծառայություններից: Ելնելով վերոգրյալից՝ առցանց հարցման արդյունքում փորձ է արվել նաև պարզելու, թե *«Եթե Ձեզ/Քաղաքացուն/ անհրաժեշտ լինեն որոշակի ծառայություններ, որոնք կարող են տրամադրել դատապարտյալները (օրինակ՝ թարգմանություններ, տեքստերի մշակում, հազուստի կար, կոշիկի նորոգում, վերանորոգում, հանրային սնունդ) արդյո՞ք Դուք կօգտվեք նման ծառայություններից»:*

## Արդյունքում



Գծապատկեր 8. Առցանց հարցման արդյունքներ.

«Եթե Ձեզ/բաղաբացում/ անհրաժեշտ լինեն որոշակի ծառայություններ, որոնք կարող են տրամադրել դատապարտյալները (օրինակ՝ թարգմանություններ, տեքստերի մշակում, հագուստի կար, կոշիկի նորոգում, վերանորոգում, հանրային սնունդ) արդյո՞ք Դուք կօգտվեք նման ծառայություններից»:

Չեռաբերական է, որ «այլ» /31/ պատասխանների դեպքում նշվել են, օրինակ՝

- կախված պատժի տեսակից
- հանրային սնունդ, հիգիենայի պարագաներ և այլն ձեռք չենք բերի
- միայն երաշխիք չպահանջող ծառայություններ
- և այլն

Ակնհայտորեն, ծառայությունների ձեռքբերման գործընթացում անգամ, երբ, հիմնականում, բացառվում են դատապարտյալների հետ անմիջական շփումները, կրկին առկա է ռիսկ:

Խմբային քննարկումների մասնակիցների մի մասը հստակ նշել են, որ դատապարտյալներին և նախկին դատապարտյալներին անվճար կրթություն, այդ թվում՝ հանրակրթություն ստանալու իրավունքը բախվում է սոցիալական արդարության հետ: Չասարակության սոցիալապես խոցելի շատ խմբեր հնարավորություն չունեն ստանալու կրթություն, իսկ դատապարտյալներին անվճար կրթություն ստանալու իրավունքով խաթարվում է սոցիալական արդարությունը, քանի որ *պետությունը սոցիալապես խոցելի մյուս խմբերի չի աջակցում կրթության իրավունքի իրացման հարցում, ինչպես կարող է աջակցել արդեն իսկ պետությանը վնաս տված, հանցագործություն կատարած անձին:*

Ընդհանուր առմամբ՝ դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշումները կարելի է բաժանել մի քանի խմբի՝

### • Մերժում

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կան դեպքեր, երբ դատապարտյալի կրթության իրավունքի իրացման նկատմամբ առկա է մերժողական բացասական դիրքորոշում, ինչը պայմանավորված է հանցանքի տեսակով, մասնավորապես, ըստ ֆոնուս խմբի մասնակիցների՝ մանկապղծության, բռնաբարության, սեռական հանցագործությունների դեպքում *նման անձանց համար կրթության իրավունքը չպետք է լինի մատչելի, պետության կողմից երաշխավորվող:* Ընդ որում նման դեպքերում հասարակության անդամները հիմնականում բացասական են վերաբերում այս անձանց հետ որևէ շփումներին:

- **Իրավիճակային մերժում և ընդունում**

Ըստ խմբային քննարկման մասնակիցների, կան իրավիճակներ, երբ իրենք դատապարտյալին կամ նախկին դատապարտյալին վերաբերում են որպես հասարակության լիիրավ անդամ: Նման դիրքորոշումը պայմանավորված է որևէ անձնապես ծանոթ դեպքի հետ առնչությունից, կոնկրետ անձի հետ առնչությունից, հանցանքի տեսակից և իրավիճակից: Դասավանդողների դիրքորոշումները ևս գտնվում են իրավիճակային մերժման և ընդունման տիրույթում՝ մի մասը կողմ է դասավանդել դատապարտյալներին, իսկ մյուս մասն այդ գործառույթը պատկերացնում է միայն ՔԿԶ-ներից դուրս:

- **Լատենտ մերժում և ընդունում, ազդեցության այլ գործոններ**

Հասարակության մի մասը չի ցանկանում կամ չի կարող բացահայտ ցույց տալ իր դիրքորոշումը դատապարտյալների և նախկին դատապարտյալների նկատմամբ՝ պայմանավորված իր փորձառությունով, ընդ որում անձնական և մասնագիտական, իր կարծրատիպերով, դիրքորոշումներով և այլն:

Հետաքրքրական էր, որ քննարկումների մասնակիցներն ընդգծեցին, որ իրենք վստահում են դատապարտյալներին, քանի որ արդարադատության մեջ շատ սխալներ են լինում, և հնարավոր է, որ շատերի նկատմամբ վճիռն արդարացիորեն չի կայացվել: Արդարադատության նկատմամբ վստահության պակասը նրանց մոտ ձևավորել է այն դիրքորոշումը, որ գուցե դատապարտյալների մի մասը չի դատապարտվել կատարված հանցանքի համար կամ դրան համարժեք չափով: Մասնակիցների այն փոքր մասը, որն անձնական, ընկերական միջավայրում ունի կամ ունեցել է առնչություն խնդրին, նշեց, որ որևէ խտրականություն չեն դնում նախկին դատապարտյալի և հասարակության մյուս անդամների մեջ:

**Այսպիսով,** ուսումնասիրելով դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշումները **կարող ենք եզրահանգել, որ**

- Մարդիկ, որոնք ընդունում են դատապարտյալների հավասար իրավունքները, միևնույն ժամանակ միշտ չէ, որ հանդուրժում են իրենց հարազատների շփումները նախկին ազատագրվածների հետ՝ դրանով իսկ լատենտ ձևով մերժելով նրանց և հասարակության մյուս անդամների իրավունքների հավասարությունն իրականում:
- Ընկալումների և վարքագծային դրսևորումների միջև տարբերությունը ցույց է տալիս, որ կա տեղեկատվության և վստահության հսկայական բաց, որ հանրության լայն շերտերը, պայմանավորված դրանով, անձնական տարածք գուցե և չթողնեն նախկին ազատագրվածի:
- Ուսումնասիրության մասնակիցների զգալի մասը դրական է արձագանքում կրթության կազմակերպման պետական և ոչ պետական ծրագրերին և կրթությունը դիտարկում է այն կարևոր միջոցներից մեկը, որն անձին հնարավորություն է տալու ուղղվել և վերաինտեգրվել հասարակություն:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԲԿԳ-ում կրթության կազմակերպումը պետք է հասանելի դարձնել ազատագրված և դատապարտված բոլոր անձանց համար՝ պատժի կրման բոլոր փուլերում: Մասնավորապես, անհրաժեշտ է կարգավորել հանրակրթությունը չունեցող, սակայն 19 տարին լրացած անձանց կրթության իրականացման հարցը, ինչպես նաև սահմանել կրթության կազմակերպման առանձնահատուկ պահանջներ՝ պայմանավորված անձի՝ ԲԿԳ-ում գտնվելու ժամկետներով (այդ թվում՝ որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրված դատապարտյալների համար):
2. Գործնականում անհրաժեշտ է ընդլայնել ԲԿԳ-ներում իրականացվող կրթական ծրագրերի շրջանակը՝ ներառելով ՀՀ բոլոր ԲԿԳ-ները, իրականացնել պետության կողմից կայուն և շարունակական կրթական ծրագրեր՝ հիմնված դատապարտյալների կրթական մակարդակի և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման վրա:
3. Ցանկալի է վերանայել ՀՀ արդարադատության նախարարի 2019թ.-ի հունիսի 4-ի N198-Լ հրամանի և ՀՀ արդարադատության նախարարի 2018թ.-ի հուլիսի 12-ի N336-Լ հրամանի հավելվածով սահմանված զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման Կրթական չափորոշիչը: Մասնավորապես, բարձրագույն կամ հետբուհական կրթությունը ստանալու և համապատասխան դիպլոմի առկայության դեպքում դատապարտյալը պետք է ստանա առավելագույն 5 միավորը, 4 միավոր պետք է տրվի միջին մասնագիտական և միջնակարգ կրթությունը ստանալու, իսկ 3 միավոր 2 և ավելի վերապատրաստման դասընթացների կամ սեմինարների մասնակցելու դեպքում, եթե դրանց արդյունքում անձը ներգրավվել է աշխատանքի, ինքնագործ միավորման կամ հանրօգուտ այլ գործունեությանը:
4. Օրենսդրորեն պետք է սահմանել, որ դատապարտյալների մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է ոչ միայն դրսեկության և հեռավար ձևերով, այլ նաև ստացիոնար և հեռակա՝ ելնելով ուղղիչ հիմնարկի տեսակից, դատապարտյալի անհատական հատկանիշներից և այլ առանձնահատկություններից: Ավելին, պետք է նախագծել դատապարտյալների կրթության կանոնակարգման և արդյունավետ կազմակերպման համար «Ազատագրված դատապարտված անձանց հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպման առանձնահատկությունները սահմանելու մասին» համապատասխան իրավական ակտ: Այդ ակտով կսահմանվի կրթության որևէ տեսակի կազմակերպման համար լիցենզավորման պայմաններն ու պահանջները, համապատասխան տարածքային, լաբորատոր պայմանների, ուսուցչական կազմի, դասասենյակների և այլնի առանձնահատկություններ՝ հիմք ընդունելով համապատասխան չափորոշիչները:
5. Անհրաժեշտ է ապահովել բոլոր ԲԿԳ-ներում կրթական համապատասխան միջավայր/պայմաններ (դասասենյակներ, գրադարաններ, գրականության արդիականացում, ընթերցասարահներ, տպագիր այլ նյութերի հասանելիություն, թերթերի ամսագրերի բաժանորդագրություն): Վերջիններից օգտվելու հանգամանքը պետք է դիտարկել որպես խրախուսական գործոն «ազատագրված անձ-քրեակատարողական ծառայող» դրական հարաբերություններ ստեղծելու գործում, ուղղիչ հիմնարկի

մեկուսացվածության աստիճանը փոխելիս ու պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելիս:

6. Նոր ՔԿՅ-ների նախագծման գործընթացում պետք է ներառել կրթության համար առանձնացված տարածք՝ կրթական միջավայրը որպես ՔԿՅ-ների գործունեության բնականոն մաս դարձնելու նպատակով:
7. Մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումների մասնակցությունը ցանկալի է դարձնել պարտադիր այն դատապարտյալների համար, ովքեր կրթության որևէ ձևում ներգրավված չեն:
8. Հարկ է ներդնել քրեակատարողական ծառայությունում դատապարտյալների կրթության մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ստացման կանոնակարգված տեղեկատվական համակարգ, նախատեսել համապատասխան վարչական վիճակագրության ձևանմուշներ՝ դատապարտյալների կրթական ցուցանիշների հետագա դինամիկան և միտումները բացահայտելու համար /հավելվածում տրված է օրինակելի նմուշ/:
9. Հաշվի առնելով, որ առաջիկայում նախատեսվում է էլեկտրոնային համակարգի գործարկում ՔԿՅ-ների գործունեության արդյունավետության բարձրացման համար, ցանկալի է, որ այդ համակարգն ունենա ՔԿՅ-ներում իրականացվող կրթական ծրագրերին վերաբերող տեղեկատվություն:
10. Անհրաժեշտ է կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ կրթական ծրագրերում ներառված մանկավարժական անձնակազմերի համար, մինչև ույն ժամանակ իրազեկման հանդիպումներ իրականացնել կրթական հաստատություններում դատապարտյալների կրթության նկատմամբ առավել զգայուն և ներառական մոտեցում զարգացնելու համար:
11. Անհրաժեշտ է իրականացնել հանրության լայն շերտերում ազատագրվման վայրերում իրականացվող կրթության կարևորության հանրային իրազեկման, քննարկումներ, կլոր սեղաններ՝ դատապարտյալների նկատմամբ հանրային ընկալումների փոփոխության, նրանց վերաինտեգրումն աշխատաշուկայում խթանելու նպատակով:

**Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց  
հասարակության ներկայացուցիչների շրջանում**

**1. Հասարակական ընդհանուր ընկալումները, պատկերացումները բանտարկյալների իրավունքների վերաբերյալ**

1. Ի՞նչ եք կարծում, բանտարկյալները/ նախկին բանտարկյալները հավասար իրավունքներ և հնարավորություններ ունեն լայն հասարակության նման:

2. Ի՞նչ եք կարծում, բանտարկյալները կրթության իրավունք ունեն: Ինչպիսի՞ կրթություն պետք է ստանան բանտարկյալները (պաշտոնական, ոչ ֆորմալ, երկարաժամկետ, կարճաժամկետ, քոլեջ, համալսարան):

3. Ի՞նչ օգուտ կարող է տալ կրթությունը նախկին/ բանտարկյալներին:

**2. Բանտարկյալների կրթության նկատմամբ հասարակության պիտակավորման, խտրական պրակտիկայի վեր հանումը**

4. Արդյո՞ք պետք է նախկին բանտարկյալները սովորեն միևնույն հաստատություններում՝ լայն հասարակության հետ:

5. Կարո՞ղ է նախկին բանտարկյալը սովորել հեղինակավոր մասնագիտություն և կատարել մասնագիտական կարիերա:

6. Որքանո՞վ եք վստահում նախկին դատապարտյալին: Օրինակ, ինչպե՞ս կվերաբերվեք, որ իմանաք նախկին բանտարկյալը խանութում է աշխատում, վարսավիր է և այլն: Ի՞նչ եք մտածում այս մասին:

**ՔԿՀ-ներում իրականացվող կրթական ծրագրի ընդհանուր նկարագիրը՝ ըստ առարկայացանկի, թիրախ խմբերի՝ անչափահասներ, կանայք, որոշակի ժամկետով դատապարտված անձինք, ցմահ դատապարտյալներ**

Ծրագրի անվանումը	Տարի	Մասնակիցներ
Անչափահասների գեղագիտական դաստիարակություն	2013թ.	Անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավոր-19 Կին դատապարտյալ՝-20
	2014թ.	Անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավոր-9 Կին դատապարտյալ՝-25
	2015թ.	Անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավոր-10 Կին դատապարտյալ՝-25
	2016թ.	Անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավոր-10 Կին դատապարտյալ՝-25 «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ -35
	2017թ.	Անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավոր-13 Կին դատապարտյալներ-35 «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ -55
ՓԻ-ԷՅՉ ինթերնեշնլ Աբովյան ՔԿՀ-ում ծնողական ակումբի ստեղծում	2015թ.	Կին դատապարտյալ-45 Կին դատապարտյալների երեխաներ-60
Խթանենք արդարադատության մատչելիությունը երեխաների համար	2016թ.	Կին դատապարտյալ - 45 Կին դատապարտյալների երեխաներ - 14
Աջակցություն ՀՀ-ում նորաստեղծ պրոբացիայի ծառայությունում երեխայանպաստ մոտեցումների և կառուցակարգերի ձևավորմանը	2017թ.	Կին դատապարտյալ - 35
Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության դասախոսությունների և գործնական պարապմունքներ	2018թ.	Կին դատապարտյալ - 47 Անչափահաս դատապարտյալ - 7 «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ 32
Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության դասախոսությունների և գործնական պարապմունքներ	2019թ.	Կին դատապարտյալներ - 19 Անչափահաս դատապարտյալ - 7 «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ - 98

**Դասընթացներն՝ ըստ տարեթվերի**

Ծրագիր Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակություն	
Տարեթիվ	Առարկա
<b>2013</b>	Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն
<b>2014</b>	Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն
<b>2015</b>	Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն Յոգաբանություն
<b>2016</b>	Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն Յոգաբանություն
<b>2017</b>	Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն Առողջ ապրելակերպ Յոգաբանություն
<b>2018</b>	Առողջ ապրելակերպ Հիմնական գրագիտություն/ հայոց լեզու և գրականություն/ Հիմնական գրագիտություն /մաթեմատիկա Սոցիալական ուսուցում և կյանքի հմտություններ Դեկորատիվ կիրառական արվեստ
<b>2018</b>	Քաղաքացիական հասարակական ինստիտուտի կողմից Յոգա Ֆիթնես Խոհարարական դասընթաց Համակարգչային հմտություններ, թվայնացում Վարսավիրական հմտություններ Բիզնես, ձեռնարկատիրություն Անգլերեն լեզու
<b>2019</b>	Համակարգչային հմտություններ Բիզնես գրագիտություն Դեկորատիվ կիրառական արվեստ Հայոց լեզու և գրականություն Անգլերեն լեզու



### Հավելված 3

#### Կրթության վիճակագրության վերաբերյալ հաշվետվային ձևանմուշներ

1. Քրեակատարողական հիմնարկների թիվը, դրանցից այն քրեակատարողական հիմնարկների թիվը, որտեղ կան կրթական ծրագրեր
2. Քրեակատարողական հիմնարկներում ինքնագործ միավորումների թիվը և տեսակները, դրանցում ներգրավված դատապարտյալների թիվը՝ ըստ քրեակատարողական հիմնարկների և ըստ ինքնագործ միավորումների տեսակների
3. Պատիժ կրող անձանց հետևյալ բաշխվածությունը՝

Կրթություն/տարիք	մինչև 18 տարեկան, որից կանայք	19-30 տարեկան, որից կանայք	31-63 տարեկան, որից կանայք	64 և ավել, որից կանայք
Թերի միջնակարգ կրթություն				
Միջնակարգ կրթություն				
Միջին մասնագիտական կրթություն				
Թերի բարձրագույն				
Բարձրագույն				
Չետրուհական				
Ոչ ֆորմալ կրթություն, մասնագիտական հմտությունների դասընթացներ				

Կրթություն/պատժի տեսակը	որոշակի ժամկետով ազատագրվում	ցմահ ազատագրվում	ֆրոնտի կ	տուգանք	հանրային աշխատանք	որոշակի պաշտոններ կամ զբաղեցնելու որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել
Թերի միջնակարգ կրթություն						
Միջնակարգ կրթություն						
Միջին մասնագիտական կրթություն						
Թերի բարձրագույն						
Բարձրագույն						

Հետբուհական						
Ոչ ֆորմալ կրթություն, մասնագիտական հմտությունների դասընթացներ						

կրթություն/ ընթաց	հանցագործության հետևանքներ	մարդու ղեմ ուղղված <sup>21</sup>	սեփականության, տնտեսական և տնտեսական գործունեության դեմ ուղղված	հասարակական անվտանգության դեմ ուղղված	համակարգային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված	հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված	բնակչության առողջության դեմ ուղղված	պետական իշխանության դեմ ուղղված	լից
Թերի միջնակարգ կրթություն									
Միջնակարգ կրթություն									
Միջին մասնագիտական կրթություն									
Թերի բարձրագույն									
Բարձրագույն									
Հետբուհական									

4. Պատիժ կրող անձանց հետևյալ բաշխվածությունն ըստ՝

- Պատժի տեսակի՝ որոշակի ժամկետով ազատազրկում, ցմահ ազատազրկում, կալանք, տուգանք, հանրային աշխատանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել

5. Մեկ դատապարտյալի վրա միջինը ծախսվող գումարը՝ օրեկան, ամսական և տարեկան կտրվածքով, ինչպես նաև մեկ դատապարտյալի կրթության վրա ծախսվող գումարը, ներառյալ՝ ֆորմալ կրթությունը:

6. պրոբացիայի շահառուների թիվը, նաև նրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները, ովքեր գտնվում են պրոբացիայի ծառայությունում վերահսկողության ներքո՝ ըստ սեռատարիքային և կրթության աստիճանների բաշխվածության:

<sup>21</sup>Կարող է բացվել ըստ գլուխների

1. Մարդու կյանքի և առողջության դեմ,
2. Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ,
3. Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ,
4. Մարդու և բաղաբացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ, ընտանիքի և երեխայի շահերի դեմ:

